ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25

«17» ապրիլի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ՝ ԹՈՌՈՒՆ ՔԱՄԱԼԻ ԽՈՒԴՈՅԱՆԻՆ ԵՎ ՀԶՐԱԹ ՀԱՍԱՆԻ ԽՈՒԴՈՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-108-0106-0104 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.130606 ՀԵԿՏԱՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ՝ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 14/11/2018թ. «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» N Կ-09/11/2018-39-0008 որոշումը և հաշվի առնելով քաղաքացիներ՝ Թոռուն Քամալի Խուդոյանին և Հզրաթ Հասանի Խուդոյանի 2019 թվականի մարտի 11-ի համատեղ դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին

որոշում է

1.Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Վահրամաբերդ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկին, որով նախատեսվում է Մարմաշեն համայնքի վարչական

սահմանում, Վահրամաբերդ բնակավայրում, Մարմաշեն համայնք, գյուղ Վահրամաբերդ, 27 փողոց, բնակելի տուն 9 հասցեում գտնվող, քաղաքացիներ՝ Թոռուն Քամալի Խուդոյանին և Հզրաթ Հասանի Խուդոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 08-108-0106-0104 կադաստրային ծածկագրով 0.130606 հեկտար արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակություն, այդ հողամասում առկա 94.91 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու նպատակով:

2. Համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանին՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ հողերի օտագործման ժամանակավոր սխեմայով սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմել համապատասխան հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	------ v ----------	-------- ----------	----------
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----- v ----------	----------	------- ----------
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	------ v ----------	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	----- v ----------	----------	-------- ----------
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	----- v ----------	----------	----------

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ ------- v ---------- ---------- --------- ----------

ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝ ----- v ---------- ---------- ----------

ՋԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝ ---- v ---------- ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«17» ապրիլի 2019 թվական

գյուղ Մայիսյան